ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ
MUNICIPALITY OF TALIN

0501 ք.Թալին Գայի 1
Հեռ 060-75-77-87
Էլ.փոստ : talinihamaynqapetaran@list.ru

0501 t.Talin
Tel.060-75-77-87
Email:talinihamaynqapetaran@list.ru

N° 056/3843 12 12 2025թ

«Հիպոկրատ Դենտ» ՍՊ Ընկերության
Տնօրեն՝ **Արկադի Մարտիրոսյանին**
հասցե՝ **Կոտայքի մարզ Ձորաղբյուր 2224**
Ջրվեժ Այգետարածք 4/115
Հեռ +37499966646
Hippocrates0109@gmail.com
ՀՎՀՀ 03584501

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկելու մասին

Թալինի համայնքապետարանի կողմից 28.11.2025թ-ին հրապարակված **«ՀՀ ԱՄ ԹՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/169»** ծածկագրով ընթացակարգի 1-ին 4-րդ 5-րդ և 6-րդ չափաբաժիններով հայտ ներկայցրած և 5-րդ և 6-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչված **«Հիպոկրատ Դենտ» ՍՊ** Ընկերությունը 09,12.2025թ-ին ծանուցվել է հայտին չհամապատասխանող փաստաթղթերի ճշտման համար 1 օր ժամկետ տրամադրելու մասին: Ընկերությունը ճշտված փաստաթղթերը չի ներկայացրել 11.12.2025թ-ին սահմանված ժամկետը ավարտվել է:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) և բ) ենթակետերի դրույթները հետևյալն է՝

Հոդված 6. Մաս 1-ին կետ 6)

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով, գնման գործընթացին մասնակցի հետագա մասնակցությունը դադարեցնելու և գնման ընթացակարգը վերը նշված չափաբաժիններով չկայացած լինելու մասին հայտարարությունը և ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում «Չկայացած գնման ընթացակարգի մասին հայտարարություն» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Մասնակցը, պայմանագիրը

ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև մասնակցի էլեկտրոնային փոստին:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Թալին համայնքի ղեկավար **Տ.Սափեյան**